ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 22.10.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2021/260

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ռ. Մկրտչյանի

Պատվիրատու՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտե
Մասնակից՝ «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ

Մասնակցությամբ՝
«ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ի ներկայացուցիչ՝ Մ. Սիմոնյանի,

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/6» ծածկագրով բաց մրցույթ, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի նոր մասնաշենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 27.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15609-2021 գրությամբ «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

ՊԱՐԶԵՑ

1. Գործի նախապատմությունը.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 17.09.2021թ. թիվ 02/16.4/8497-2021 գրության հիման վրա, 27.09.2021թ.-ին «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքերը:

Բողոքներ քննող անձին գործը մակագրվել է 27.09.2021թ.-ին:

28.09.2021թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2021/260 համարի ծածկագիրը:

06.10.2021թ.-ին և 22.10.2021թ.-ին նշանակվել և հրավիրվել են նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 06.10.2021թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 22.10.2021թ.-ին:

2. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 17.09.2021թ. թիվ 02/16.4/8497-2021 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից 2021 թվականի հուլիսի 16-ին հայտարարված ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/6 ծածկագրով ՀՀ Գեղարքունիքի մարզի <<Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ի նոր մասնաշենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերման գնման ընթացակարգին մասնակցության հայտ է ներկայացրել նաև <<ՆիկԴավ Գրուպ>> բաց բաժնետիրական ընկերությունը (այսուհետ՝ Ընկերություն):

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի (այսուհետ՝ Կարգ) 41-րդ կետի համաձայն Ընկերությանը ծանուցվել է մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել

ներկայացված հայտում արձանագրված անհամապատասխանությունները, ինչը վերջինիս կողմից սահմանված ժամկետում կատարվել է թերի:

Կարգի 42-րդ կետի համաձայն՝ Ընկերության հայտը մերժվել է:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/6» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 28.09.2021թ.-ի գրությամբ դիմել է «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15609-2021 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայացել է հրավիրված նիստերին՝ բանավոր անդրադառնալով նախաձեռնված ընթացակարգի հիմքերին ու հիմնավորումներին:

4. <u>ՍՑ-LO-2021/260 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. ՀՀ քաղաքաշինության կոմիտեի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի նոր մասնաշենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 16.07.2021թ.-ին հայտարարվել է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/6» ծածկագրով բաց մրցույթ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով մի շարք չափաբաժինների մասով հայտ է ներկայացրել նաև «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ն:

iii. Մասնակիցը մասնակցության հայտի թիվ 1 հավելվածով՝ գնման ընթացակարգին մասնակցելու դիմում-հայտարարությամբ, հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/6» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին և հրավերի պահանջներին համապատասխան ներկայացնում է հայտ:

iv. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 09.09.2021թ.-ի նիստի թիվ 2-2 արձանագրության համաձայն՝ «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ով լրացված չէ արտադրողների անվանումները, մոդելները (դրանց առկայության պարագայում) և անձնագրային տեխնիկական բնութագրերը, իսկ Ծավալաթերթի մասով՝ ներկայացված ծավալաթերթում աշխատանքների բաժինների կշիռները չեն համապատասխանում հրավերի պահանջներին:

v. Նույն արձանագրության համաձայն՝ Հանձնաժողովը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետով, որոշել է մեկ (1) աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները:

vi. Հանձնաժողովի քարտուղարի կողմից 09.09.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ նույնաբովանդակ ծանուցում է ուղարվել Մասնակցի superlilnik@yandex.ru էլ. փոստի հասցեին:

vii. Հանձնաժողովի 13.09.2021թ.-ի նիստի թիվ 2-3 արձանագրության 1.1-րդ կետի համաձայն՝ ներկայացված փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում արձանագրված անհամապատասխանությունների մասին ծանուցվել է մասնակիցներին առաջարկելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետի պահանջների համաձայն մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել արձանագրված անհամապատասխանությունները. «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթում աշխատանքների բաժինների կշիռների ստացված կշիռները չեն համապատասխանում հրավերի պահանջներին: Շտկումով ներկայացված Հավելված N 1.1-ում առկա են հետևյալ անհամապատասխանությունները՝

1-5, 56-59 տողերով սարքավորումների համար ներկայացված անվանումով արտադրող կամ գոյություն չունի, կամ անվանման մեջ առկա է տառասխալ, որով պայմանավորված դրանց իսկությունը ստուգել հնարավոր չէ:

9-13-րդ տողերով ներկայացված է 1-ից ավել մոդելի միևնույն արտադրողի դիմաց և միաժամանակ /միաժամանակ համապատասխանաբար VC-315, ВПА-1 315, 125VO, 160VO, 100VO մոդելները չեն հանդիսանում VKT արտադրության մոդելներ/:

10-րդ տողով ներկայացված է 1-ից ավել արտադրող /VKT և BEHTC/:

9, 11-13, 17-23, 28-31 տողերով ներկայացված է ներածման սարքավորման մոդել՝ հրավերով պահանջվող օդափոխիչների փոխարեն, որոնք օդափոխության համակարգի տարբեր սարքավորումներ են:

9-31-րդ տողերից յուրաքանչյուր և միևնույն ժամանակ բնույթով և/կամ բնութագրով միմյանցից տարբերվող սարքավորմումների համար ներկայացված է VKT արտադրողի միևնույն VKC-S-2 մոդելի ներածման համակարգը, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին և նախագծի լուծումներին:

32 և 33-րդ տողերով պահանջվող համապատասխանաբար ներածման-արտածման ռեկուպերատիվ սարքի և արտածման օդափոխիչի փոխարեն ներկայացվել է օդի լավորակման սպլիտ համակարգեր՝ ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին և նախագծի լուծումներին:

54-րդ տողով պահանջվող կաթսայի դիմաց ներկայացվել է գազային այրիչ, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին և նախագծի լուծումներին:

70-րդ տողով ներկայացված չէ պահանջվող սարքավորման արտադրողի անվանումը, իսկ որպես մոդել կամ արտադրող ներկայացված STEM-3B անվանումով սարքավորում կամ գոյություն չունի, կամ անվանման մեջ առկա է տառասխալ, որով պայմանավորված վերջինիս իսկությունը ստուգել հնարավոր չէ:

78-րդ տողով ներկայացված սարքավորումը չի համապատասխանում հրավերի պահանջներին, հրավերով և նախագծային փաստաթղթերով պահանջված էր 80 անձի համար նախատեսված 12մ3/օր արտադրողականության մաքրման կայան՝ իսկ մասնակցի կողմից ներկայացված TOPAZ "TOPAS-8" մաքրման կայանն ունի 1.2 մ3/օր արտադրողականություն և նախատեսված է 8 անձի համար, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին և նախագծի լուծումներին:

viii. Նույն արձանագրության 1.2-րդ կետի համաձայն՝ Հանձնաժողովը որոշել է «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել:

ix. Հանձնաժողովի 14.09.2021թ.-ի նիստի թիվ 2-4 արձանագրության 1.1-րդ կետի համաձայն՝ գնահատող հանձնաժողովը, հաշվի առնելով որ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակիցների հայտերում արձանագրված անհամապատասխանություններում գնահատող հանձնաժողովի N 2-3 արձանագրության մեջ տեղ է գտել վրիպակ, որոշել է գնահատող հանձնաժողովի 13.09.2021թ.-ի թիվ 2-3 արձանագրության 1.1 կետից հանել «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ին վերաբերող «ներկայացված ծավալաթերթում աշխատանքների բաժինների կշիռների ստացված կշիռները չեն համապատասխանում հրավերի պահանջներին» նախադասությունը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15609-2021 գրությամբ «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 30-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ մասնակիցը հայտը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով: Հայտը ներառում է մասնակցի հաստատած՝

1) հրավերի պահանջներին իր տվյալների համապատասխանության մասին հայտարարությունը.

2) գնային առաջարկը.

3) ոչ գնային առաջարկը (տեխնիկական առաջարկ կամ տեխնիկական բնութագիր), եթե հրավերով նախատեսված է:

4) հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ):

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ շինարարական ծրագրերի գնման դեպքում մասնակիցը ներկայացնում է նաև իր կողմից՝

ա. հաստատված՝ լրացված ծավալաթերթ-նախահաշիվ, հաշվի առնելով հրավերին կցված ծավալաթերթով ըստ աշխատանքների նախահաշվային բաժինների համար սահմանված առավելագույն կշիռները: Ընդ որում կշիռները կիրառվում են մասնակցի առաջարկած ընդհանուր գնային առաջարկի նկատմամբ, նկատի ունենալով, որ շեղումը չի կարող ավել կամ պակաս լինել հրավերին կցված ծավալաթերթով տվյալ բաժնի համար սահմանված կշռի չափի տասը տոկոսից: Աշխատանքների բաժինները չեն կարող արհեստականորեն միավորվել կամ առանձնացվել,

բ. առաջարկվող՝ հրավերին կցված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին համապատասխանող սարքերի և սարքավորումների տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները, արտադրողները և երաշխիքային ժամկետները: Ընտրված մասնակցի հետ կնքվող պայմանագրի նախագծում ներառվում են վերջինիս կողմից հայտով ներկայացված սարքերը և սարքավորումները:

Կարգի 40-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման և գնահատման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում է գնային առաջարկը, կամ եթե այն ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, բացառությամբ սույն կարգի 41-րդ կետով նախատեսված դեպքի:

Կարգի 41-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ ներառյալ այն դեպքերը, երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Նույն Կարգի 42-րդ կետի համաձայն՝ եթե սույն կարգի 41-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա նրա հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, ներառյալ եթե մասնակիցը սույն կարգի 32-րդ կետի 1-ին մասի «ե» պարբերությամբ սահմանված ժամկետում չի ներկայացնում հայտի

ապահովման բնօրինակը, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի նոր մասնաշենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 16.07.2021թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/6» ծածկագրով բաց մրցույթի հրավերի (այսուհետ նաև՝ Հրավեր) 8.9-րդ կետի համաձայն՝ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, ներառյալ երբ հայտում ներառված՝ Հայաստանի Հանրապետության ռեզիդենտ հանդիսացող մասնակցի կողմից հաստատված փաստաթղթերը կամ դրանց մի մասը հաստատված չեն էլեկտրոնային թվային ստորագրությամբ, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հրավերի 8.10-րդ կետի համաձայն՝ եթե սույն հրավերի 8.9-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:

Վերոգրյալ իրավակարգավորումների լույսի ներքո՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը ներկայացնում է հրավերով սահմանված կարգով հայտ, որը ներառում է մասնակցի կողմից ներկայացված դիմում-հայտարարությունը, առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը, գնային առաջարկը, հրավերով նախատեսված այլ փաստաթղթեր (տեղեկություններ): Ընդ որում, Կարգի 41-րդ կետը ուղղակիորեն սահմանում է արձանագրված անհամապատասխանությունը շտկելու անթույլատրելիություն հայտում ներառվող միայն գնային առաջարկի համար, այն էլ՝ որոշ բացառություններով: Սույն կետի իմաստից բխում է, որ մնացած բոլոր դեպքերում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Հայտերի գնահատումն իրականացվում է հրավերով սահմանված կարգով և հրավերով նախատեսված պայմաններին չհամապատասխանող հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են, ներառյալ եթե մասնակիցը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրվա Երևանի ժամանակով 17:00-ն գնահատող հանձնաժողովին չի ներկայացնում հայտի ապահովման բնօրինակը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում նշել, որ օրենսդիրն իմպերատիվ կերպով սահմանել է, որ եթե հայտերի բացման և գնահատման նիստի ընթացքում իրականացված գնահատման արդյունքում մասնակցի հայտում արձանագրվում են անհամապատասխանություններ՝ հրավերի պահանջների նկատմամբ, բացառությամբ այն դեպքերի երբ բացակայում է գնային առաջարկը կամ եթե վերջինս ներկայացված է հրավերի պահանջներին անհամապատասխան, ապա հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին էլեկտրոնային եղանակով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ նաև՝ Օրենսգիրք) 3-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական օրենսդրությունը հիմնվում է իր կողմից կարգավորվող հարաբերությունների մասնակիցների հավասարության, կամքի ինքնավարության և գույքային ինքնուրույնության, սեփականության անձեռնմխելիության, պայմանագրի ազատության, մասնավոր գործերին որևէ մեկի կամայական միջամտության անթույլատրելիության, քաղաքացիական իրավունքների անարգել իրականացման անհրաժեշտության, խախտված իրավունքների վերականգնման ապահովման, դրանց դատական պաշտպանության սկզբունքների վրա:

Նույն հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ քաղաքացիները և իրավաբանական անձինք քաղաքացիական իրավունքները ձեռք են բերում ու իրականացնում իրենց կամքով և ի շահ իրենց: Նրանք ազատ են պայմանագրի հիման վրա սահմանելու իրենց իրավունքները և պարտականությունները, որոշելու պայմանագրի՝ օրենսդրությանը չհակասող ցանկացած պայման:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 8-րդ հոդվածի 2-րդ պարբերության համաձայն՝ քաղաքացիական իրավական նորմերի տեքստում կիրառվող բառերի և արտահայտությունների տարբեր ձևերով մեկնաբանման դեպքում, նախապատվությունը տրվում է նույն օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին կետում շարադրված՝ քաղաքացիական օրենսդրության սկզբունքներին համապատասխանող մեկնաբանմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են օրենքով ու այլ իրավական ակտերով նախատեսված հիմքերից, ինչպես նաև քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններից, որոնք թեև օրենքով կամ այլ իրավական ակտերով նախատեսված չեն, սակայն, ըստ քաղաքացիական օրենսդրության սկզբունքների, առաջացնում են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ:

Դրան համապատասխան, քաղաքացիական իրավունքները և պարտականությունները ծագում են՝

1) օրենքով նախատեսված պայմանագրերից և այլ գործարքներից, ինչպես նաև այն պայմանագրերից ու գործարքներից, որոնք թեև օրենքով նախատեսված չեն, սակայն դրան չեն հակասում.

2) պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ակտերից, որոնք օրենքով նախատեսված են որպես քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմք.

3) քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանող դատական ակտից.

4) օրենքով թույլատրվող հիմքերով գույք ձեռք բերելու հետևանքով.

5) գիտության, գրականության, արվեստի ստեղծագործություններ, գյուտեր և մտավոր գործունեության այլ արդյունքներ ստեղծելու հետևանքով.

6) այլ անձին վնաս պատճառելու հետևանքով.

7) անհիմն հարստացման հետևանքով.

8) քաղաքացիների և իրավաբանական անձանց այլ գործողությունների հետևանքով.

9) այնպիսի իրադարձությունների հետևանքով, որոնց հետ օրենքը կամ այլ իրավական ակտը կապում է քաղաքացիական իրավական հետևանքների առաջացում:

ՀՀ Սահմանադրության 3-րդ, 11-րդ, 28-րդ, 39-րդ, 59-րդ և բազմաթիվ այլ հոդվածներում ամրագրված են անձի իրավունքների և ազատությունների իրականացման, օրենսդրությամբ դրանց արդյունավետ պաշտպանության երաշխավորումն ապահովելու ելակետային սկզբունքներ ու նորմեր, որոնք համապարտադիր նշանակություն ունեն հասարակական բոլոր, այդ թվում նաև՝ քաղաքացիաիրավական հարաբերությունների կարգավորման բնագավառում:

ՀՀ Սահմանադրության վերոհիշյալ նորմերի պահանջների կատարման երաշխավորմանն է կոչված ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը, որը սահմանում է

քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավական վիճակը, կարգավորում սեփականության իրավունքի և այլ գույքային իրավունքների, դրանց հետ կապված անձնական ոչ գույքային հարաբերությունները, պայմանագրային և այլ պարտավորությունների ծագման, փոփոխման և դադարման հիմքերը և կարգը:

Անձանց իրավունքների իրականացման և պաշտպանության հետ կապված՝ օրենսգրքի մի շարք այլ հոդվածներով միաժամանակ սահմանվում են քաղաքացիական իրավունքների և պարտականությունների ծագման հիմքերը (10-րդ հոդված), այդ իրավունքների իրականացման ընդհանուր կարգը, սահմանները և պաշտպանության եղանակները (11-րդ, 12-րդ, 14-րդ, 16-րդ հոդվածներ):

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար **պատասխանատու է մեղքի առկայության դեպքում**, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Սույն գործի փաստերի համաձայն՝ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի նոր մասնաշենքերի կառուցման աշխատանքների ձեռքբերման նպատակով 16.07.2021թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/6» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի 09.09.2021թ.-ի նիստի թիվ 2-2 արձանագրությամբ արձանագրվել է, որ «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված Հավելված 1.1-ով լրացված չէ արտադրողների անվանումները, մոդելները (դրանց առկայության պարագայում) և անձնագրային տեխնիկական բնութագրերը, իսկ Ծավալաթերթի մասով՝ ներկայացված ծավալաթերթում աշխատանքների բաժինների կշիռները չեն համապատասխանում հրավերի պահանջներին, ինչով պայմանավորված որոշում է կայացվել մեկ (1)

աշխատանքային օրով կասեցնել հայտերի գնահատման նիստը և ծանուցել «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել արձանագրված անհամապատասխանությունները, ինչի մասին Հանձնաժողովի քարտուղարի կողմից 09.09.2021թ.-ին armeps.am համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով անհամապատասխանությունների շտկման վերաբերյալ նույնաբովանդակ ծանուցում է ուղարկվել Մասնակցի superlilnik@yandex.ru էլ. փոստի հասցեին, սակայն «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ի կողմից որպես անհամապատասխանությունների վերաբերյալ ներկայացված շտկված փաստաթղթերում նույնպես արձանագրվել են անհամապատասխանություններ. Մասնավորպես՝ «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ի կողմից ներկայացված ծավալաթերթում աշխատանքների բաժինների կշիռների ստացված կշիռները չեն համապատասխանում հրավերի պահանջներին: Շտկումով ներկայացված Հավելված N 1.1-ում առկա են հետևյալ անհամապատասխանությունները՝

1-5, 56-59 տողերով սարքավորումների համար ներկայացված անվանումով արտադրող կամ գոյություն չունի, կամ անվանման մեջ առկա է տառասխալ, որով պայմանավորված դրանց իսկությունը ստուգել հնարավոր չէ:

9-13-րդ տողերով ներկայացված է 1-ից ավել մոդելի միևնույն արտադրողի դիմաց և միաժամանակ /միաժամանակ համապատսխանաբար VC-315, ВПА-1 315, 125VO, 160VO, 100VO մոդելները չեն հանդիսանում VKT արտադրության մոդելներ/:

10-րդ տողով ներկայացված է 1-ից ավել արտադրող /VKT և BEHTC/:

9, 11-13, 17-23, 28-31 տողերով ներկայացված է ներածման սարքավորման մոդել՝ հրավերով պահանջվող օդափոխիչների փոխարեն, որոնք օդափոխության համակարգի տարբեր սարքավորումներ են:

9-31-րդ տողերից յուրաքանչյուր և միևնույն ժամանակ բնույթով և/կամ բնութագրով միմյանցից տարբերվող սարքավորմումների համար ներկայացված է VKT արտադրողի միևնույն VKC-S-2 մոդելի ներածման համակարգը, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին և նախագծի լուծումներին:

32 և 33-րդ տողերով պահանջվող համապատասխանաբար ներածման-արտածման ռեկուպերատիվ սարքի և արտածման օդափոխիչի փոխարեն ներկայացվել է օդի լավորակման սպլիտ համակարգեր՝ ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին և նախագծի լուծումներին:

54-րդ տողով պահանջվող կաթսայի դիմաց ներկայացվել է գազային այրիչ, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին և նախագծի լուծումներին:

70-րդ տողով ներկայացված չէ պահանջվող սարքավորման արտադրողի անվանումը, իսկ որպես մոդել կամ արտադրող ներկայացված STEM-3B անվանումով սարքավորում կամ գոյություն չունի, կամ անվանման մեջ առկա է տառասխալ, որով պայմանավորված վերջինիս իսկությունը ստուգել հնարավոր չէ:

78-րդ տողով ներկայացված սարքավորումը չի համապատասխանում հրավերի պահանջներին, հրավերով և նախագծային փաստաթղթերով պահանջված էր 80 անձի համար նախատեսված 12մ3/օր արտադրողականության մաքրման կայան՝ իսկ մասնակցի կողմից ներկայացված TOPAZ "TOPAS-8" մաքրման կայանն ունի 1.2 մ3/օր արտադրողականություն և նախատեսված է 8 անձի համար, ինչը չի համապատասխանում հրավերի պահանջներին և նախագծի լուծումներին: Նշվածներով պայմանավորված՝ Հանձնաժողովը որոշել է «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ի հայտը գնահատել անբավարար և մերժել: Հանձնաժողովի 14.09.2021թ.-ի նիստի թիվ 2-4 արձանագրության 1.1-րդ կետով հանձնաժողովը, հաշվի առնելով որ գնման ընթացակարգի շրջանակներում մասնակիցների հայտերում արձանագրված անհամապատաս-խանություններում գնահատող հանձնաժողովի N 2-3 արձանագրության մեջ տեղ է գտել վրիպակ, որոշել է իր 13.09.2021թ.-ի թիվ 2-3 արձանագրության 1.1 կետից հանել «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ին վերաբերող «ներկայացված ծավալաթերթում աշխատանքների բաժինների կշիռների ստացված կշիռները չեն համապատասխանում հրավերի պահանջներին» նախադասությունը:

Վերոհիշյալ իրավական նորմերի և փաստական հանգամանքների հիման վրա՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Կարգի 41-րդ կետով և Հրավերի 8.9-րդ կետերի դրույթները իմպերատիվ (պարտադիր) կերպով սահմանում են, որ մասնակցի հայտի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխա-նություններ արձանագրելու դեպքում հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, իսկ հանձնաժողովի քարտուղարը նույն օրը դրա մասին համակարգի միջոցով ծանուցում է մասնակցին՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունը:

Ընդ որում, քարտուղարի կողմից արձանագրված անհամապատասխանությունների մասին մասնակցի ծանուցումն նույն օրը ուղարկելն ինքնանպատակ չէ և ուղղված է կամայականություններից խուսափելուն և ժամանակին գործողություններն իրականացնելուն, քանի որ յուրաքանչյուր դեպքում ուղղված է իրավունքների և պարտականությունների սահմանմանն ու իրագործմանը, և վերջապես՝ հետապնդում է

իրավական որոշակիություն ապահովելու նպատակ՝ որպես պետությունում իրավական որոշակիության և կայունության երաշխավորման միջոց:

ՀՀ Սահմանադրության 6-րդ հոդվածի համաձայն՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմիններն ու պաշտոնատար անձինք իրավասու են կատարելու միայն այնպիսի գործողություններ, որոնց համար լիազորված են Սահմանադրությամբ կամ օրենքներով:

ՀՀ սահմանադրական դատարանն իրավական որոշակիության սկզբունքի վերաբերյալ 02.04.2014թ.-ին կայացրած թիվ ՍԴՈ-1142 որոշմամբ հայտնել է, որ իրավական որոշակիության, իրավական անվտանգության և օրինական ակնկալիքների իրավունքի պաշտպանության սկզբունքները հանդիսանում են իրավական պետության ու իրավունքի գերակայության երաշխավորման անբաժանելի տարրերը:

Սահմանադրական դատարանը 18.04.2006թ.-ի թիվ ՍԴՈ-630 որոշմամբ, մասնավորապես, արձանագրել է, որ օրենքը պետք է համապատասխանի նաև Մարդու իրավունքների եվրոպական դատարանի մի շարք վճիռներում արտահայտված այն իրավական դիրքորոշմանը, համաձայն որի՝ որևէ իրավական նորմ չի կարող համարվել «օրենք», եթե այն չի համապատասխանում իրավական որոշակիության սկզբունքին, այսինքն՝ ձևակերպված չէ բավարար աստիճանի հստակությամբ, որը թույլ տա քաղաքացուն դրա հետ համատեղելու իր վարքագիծը: Առավել ևս իրավունքի գերակայության սկզբունքի որդեգրման շրջանակներում օրենքում ամրագրված իրավակարգավորումները պետք է անձի համար կանխատեսելի դարձնեն իր իրավաչափ սպասելիքները: Բացի դրանից իրավական որոշակիության սկզբունքը, լինելով իրավական պետության հիմնարար սկզբունքներից մեկը, ենթադրում է նաև, որ իրավահարաբերությունների բոլոր սուբյեկտների, այդ թվում՝ իշխանության կրողի գործողությունները պետք է լինեն կանխատեսելի ու իրավաչափ:

Վերը հիշատակված իրավական նորմերի նման մեկնաբանությունը բխում է նաև իրավական ակտերի որոշակիության սկզբունքից, որն իրավական պետությունում գործող կարևորագույն սկզբունքներից մեկն է, իսկ Հայաստանի Հանրապետությունը, ինչպես հռչակված է ՀՀ Սահմանադրության թե մինչև 25.12.2015թ. գործող խմբագրությամբ, թե ներկայում գործող խմբագրությամբ 1-ին հոդվածով, իրավական պետություն է:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից ՀՀ Գեղարքունիքի մարզի Ներքին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ի նոր մասնաշենքերի կառուցման աշխատանքների

ձեռքբերման նպատակով 16.07.2021թ.-ին հայտարարված «ՀՀՔԿ-ԲՄԱՇՁԲ-21/6» ծածկագրով բաց մրցույթի գնահատող հանձնաժողովի կողմից անհամապատասխանությունների արձանագրման և այդ հիմքով Մասնակցի հայտն անբավարար գնահատելու ու մերժելու մասին կայացված որոշումն արժանահավատ չէ, հիմք ընդունելով Հանձնաժողովի 14.09.2021թ.-ի նիստի թիվ 2-4 արձանագրության 1.1-րդ կետը:

Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ որևէ իրավական փաստարկով չի կարող հիմնավորվել, որ Հանձնաժողովի 13.09.2021թ.-ի նիստի թիվ 2-3 արձանագրությամբ արձանագրված անհամապատասխանությունները, բացառությամբ հետագայում վրիպակով ուղղվածը, իրապես թույլ են տրվել Մասնակցի կողմից, թե դրանք հանձնաժողովի կողմից նույնպես թույլ տրված վրիպակի արդյունք են:

Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք՝ որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ. հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Կարգի 32-րդ կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք

ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Նշված իրավանորմերի վերլուծությունից պետք է փաստել, որ օրենսդիրը մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար նախատեսել է սպառիչ պայմաններ, որոնք են պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունների խախտումը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, որպես ընտրված մասնակից պայմանագիր կնքելուց հրաժարվելը և հայտերը բացելուց հետո գնման գործընթացին հետագա մասնակցությունից հրաժարվելը: Միայն սույն դեպքերում է հնարավոր մասնակցին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում, գնահատելով ու հետազոտելով գործում առկա ապացույցները՝ Բողոքներ քննող անձը գալիս է այն եզրակացության, որ սույն դեպքում չի հիմնավորվում Մասնակցի՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված՝ մեղքի առկայությունը:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 27.09.2021թ.-ի թիվ 26/26-1/15609-2021 գրությամբ «ՆիկԴավ Գրուպ» ԲԲԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2021/260 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**